

ԲԱԺՆԵԳԻՆ

Ի Պոլսորիա
Տարեկ. 10 ֆր.
վեցամս. 5 "

Արտասահման
Տարեկ. 12 ֆր.
վեցամս. 6 "

Վանքիկա
2 Տոյ 30 սենյ

ԿԱՆԻՍԻԿ



ՊԱՅՄԱՆՔ

Գրութիւնք եւ
չեն արտեր:

Հասցէ
DIRAN
PAPAZIAN
YILDIZ TABIA
VARNA
BULGARIE

ՇԱԲԱԹԱՅԱՆԴԵՍ . ԱԶԳՅՍԻՆ ԵՒ ԶԱՒԵՇՅՍԿՍՆ

ОТГОВОРНИКЪ ГЕОРГИ ЯНТОВСКИЙ, АДВОКАТЪ.

Ե ՏԱՐԻ

ՆԵՊՏ. 1 ՇԱԲԱԹ 1901

ԹԻԻ 222

ԱՅԻՆԵՒ ԼԵԹԱՅԻՔ

ՊԻՆ ՊԻՐ ԱՏԷՏ

(ՄԻԻՆՏԵՐԻՃԱԹԸ)

Կիւլտիւրիւնի ֆգրալար վէ շիքայէլէր . Մալիւմա-
թը ֆէննիյէ . Նուգաթը Լէթայիֆ . ֆէննի Էյլէնճէլէր
վէ Բէսիմի Պէլմէճէլէր

160 տահիֆէտէն իպարէթ օլուպ . Բէյաէրբէյ
նէշր օլուռան մէզբիւր Բիթապըն պիւրննի ճիւ-
տի խիթամ պուլուպ . իտարէթանէմիլտէ սա-
թըլմագտաւըր . Ֆիյ 2 ֆրանք

ԱԶԳԱՅԻՔ

—

Պէրպէրեան վարժարանի յօրեւեանին առ-
թիւ մինչև հիւմա 700 ոսկի հաւաքուած է . Կը յու-
սացուի որ Պէրպէրեան սանուց կողմէ նուիրուե-
լիք համադումարը՝ քիչ օրէն մինչև 1200 ոսկի
յանցի . Մինակ Մանչէսթըրի միջ, ուր կը գըտ-
նուին Պէրպէրեան բաղմաթիւ շրջանաւարտներ,
որոնք վաճառականական գործերով կը զբաղին
150 ոսկիի գումար մը առաջադրած են նուիրել
որուն մեծագոյն մասը արդէն հանգանակուած է:

Պոլսոյ թերթերէն կը տեղեկանանք թէ այս
ժողովուած գումարով Պէրպէրեան վարժարանի
համագիրը՝ իր սեպհական հոգին վրայ կառու-
ցանել պիտի տայ երկյարկ շէնք մը . որ իրր վար-

ժարան պիտի ծառայէ . իսկ արդի շէնքը պիտի
սահմանուի դիշերթիկ աշակերտաց ննջարանի:

—Երեսուցէմի Ս. Յարութեան ծածարի զանա-
զան մասերուն միջ նառգութեանց պիտի ձեռ-
նարկուի երեք բաժան սկից ազգաց կողմէ. Հա-
յոց, Յունաց եւ Լատինաց: (Մալթեանք որ առանց
կռիւի եւ արխնհեղութեան առաջին այդ նորո-
գութիւնք)

—Ամերիկա բնակող Բալուցի ազգայինք այս
անգամ ընկերութիւն մը կազմած են իրենց ծը-
նընդ-ովայրի (Բալու) երկսեռ վարժարանաց օգ-
նելու համար:

—Ի նպատակ Պէրպէրեանի յօրեւեանին Ռու-
սուրի ազգայնոց կողմէ 115 ֆր. հաւաքուելով
զրկուած է Պատրիարքարան:

—Տօպրիչէն մեզ կը գրեն թէ տեղւոյն թաղ-
խորհուրդը որ անցեալները վարժարանին պար-
տուց բարձմանը համար ազգայնոց հանգանակու-
թեամբը հարիւր ոսկիի չափ դրամ հաւաքած էր,
այս անգամ ստիպուել է տեղացւոց անտարբե-
րութեանը չնորհիւ հրաժարիլ օրով եւ վարժա-
րանն ալ փակուել է:

Կեցցեն Տօպրիչցիք:

—Վենետիկի Միթիթարեան Միաբանութեան
հառատաման երկահարկւածեայ յօրեւեանի հան-
գէսին ներկայ պիտի գտնուին ի մէջացւոց Նո-
րին Ս. Օժմիթիւն ամենայն Հայոց Հայրապետին
կողմէ՝ Եւրոպիոյ առաջնորդ Գեր. Գէորգ Եպիսկո-
պոս Իւթիւնեան . Բարիկի Հայոց կողմէ՝ Արթ.


Տ. Սուքիս Վ. Պարոնեան և Բանասերի խմբագիր Տիար Կ. Բասմաշեան, իսկ Մանչեսթրի Հայոց կողմէ՝ Արթ. Թորոս քահանայ Իսահակեան Զուղայեցի, այս վերջինը իր հետ կը տանի 40 անգլոսկի իբր նուէր:

— Բեգրապուրկէն կը գրեն թէ՝ նշանաւոր բանասէր և բարեյիշատակ Մկրտիչ Սանասարեանի կտակալատար Պ. Կարապետ Եղեանց մօտերս Կարին և Պոլիսը պիտի այցելէ:

— Մեծանուն յոյն բարերար Բօլ Սթէֆանօվիչ անցեալ ուրբաթ մեռնելով ի Գատը գիւղ, կիրակի օրը մեծ շքով կատարուեր է թաղման արարողութիւնը: Հանգուցեալը ի կենդանութեան 50 ոսկի նուիրեր է Գատը գիւղի Ս. Թադևոս եկեղեցիին:

— Կոյս իրատէ մը Պաֆրայի Հայ եկեղեցիին շրջափակին մէջ մանչերու վարժարանի վերաշինութիւնը արածնած է:

— Պոլսոյ Բանկալթիի Վիենացեաց վարժարանի այս տարուան հինգ շրջանաւարտներէ մին՝ մրցմամբ հեռագրատան մէջ ընդունուած է. երկուքը եւրոպական համալսարաններու մէջ պիտի կատարելագործուին, մին հետեւելով փաստաբանութեան և միւսը մեքենագիտութեան: Մնացեալ երկուքը արդէն վաճառականական ասպարէզը մտած են:



Յառաջիկայ սեպտ. 6 հինգշաբթի իրիկուն Պորիս թատրոնին մէջ արտաքոյ կարգի շքեղ ներկայացում մը պիտի տրուի ի նպատակ Տ. և Տիկին Յակոբեաններու որ ներկայ թատերական շրջանին Վարիէթէ խմբին զարգեբէն մին եղան: Ըստ բրոկրամի պիտի ներկայացուին Ռօմէօ Ժիլիէթ հղերեղութիւնը, նոր և զուարճալի պարերդներ ու խիստ ծիծաղաշարժ երգախառն կատակերգութիւն մը: Յուսով ենք որ նպաստաւորեալը թատերասիրաց քաջալերութեանը պիտի արժանանան, որպէս զի յառաջիկային կարող ըլլան թատերական ասպարէզին մէջ աւելի յառաջանալ, ի լրումն իրենց փափագանաց:

ԱՍԵՐԻԿԱՅԱՅ ԲԱՐՔԵՐԷ

ԱՐԴԱՐ ՄԵՂԱԴՐԱՆՔ ՄԸ

«Երբեմն Ամերիկայի Հայ երիտասարդներ կը մեղադրուէին օտարի հետ ամուսնանալուն համար. բայց այսօր անոնք բազմաթիւական լայն ըմբռնումով եւ ընտանեկան երջանիկ կեանք մը վայելելու վստահութեամբ պատրաստ են Հայ օրիորդներ իրենց կենակից ունենալ՝ եթէ աղկանց ծնողք իրենց դուստրը առանց շահադիտական ակնկալութիւններու յօժարէին տալ իրենց սիրած ու հաւնած երիտասարդին: Այս առթիւ Հայ երիտասարդաց մեղադրանքը բանաւոր է ընդդէմ այն ծնողաց, որոնք իրենց դուստրը իբրեւ վաճառք ծախու հանած են և անոնք «ճանապարհածախս» դնելով 100-200 տոլար դրամ կը պահանջեն. քիչ մը կարգաւ դրել գիտցողներուն արժէքը 200 տոլարէն աւելի է. որոշումը կը թողուի անոնց ծնողաց բաւեղութիւնը: Վայ այն երիտասարդին որ այդ կարգի օրիորդի մը թեկնածուն կըլլայ, խեղճն ապահովաբար պիտի սնանկանայ՝ տալով իր մէկ քանի տարուան քրտնաթոր աշխատութեան ամբողջ արդիւնքը:

Այսպիսի ազատ երկրի մը մէջ ուր սեւերու դարեւոր գերութեան շղթան կոտորելու համար այնքան արիւն թափուած է, Հայ ծնողքներ նորօրինակ գերավաճառութիւն մը սկսած են հաստատել ի նախատինս մեր աղգութեան: Յաճախ ծնողք դրամի շատութեան կը զոհեն իրենց աղջիկը, ամուսնացնելով զանիկա իր չսիրած երիտասարդին հետ. ինչ զժբաղդութիւն հայ օրիորդին համար որ կը ստիպուի իր կեանքը յաւիտենապէս կապել չսիրած մէկուն կեանքին:

Այլ բուռական է որ տեւ այս ամբողջի դրութիւնը: Փետացուէն փոխանամ դրամ պահանջելու, ազնիւ նկարագիր և անկեղծ սէր թող նպահանջեն ծնողք, և թողուն որ Ուաշինկթընի, Լինքոլնի, Ճէֆերսոնի և Կրանթի մէջ Հայ օրիորդներ պատեհութիւն ունենան ազատ մտածելու և իրենց ընտրածը գտնելու, որպէս զի բարեկեցիկ կեանք ունենան:

(Զայն Հայրենեաց)

Մ ՄԱԼԻՍԵԱՆ

ՓՈՒՔԻ ԹՂԹԱՏԱՐ

Պ. Ս. Մ. Վառնա. — «Հայելիի անցեալ թիւ-
ւով հրատարակուած զաւելտական մէկ քանի տո-
ղերը քեզի համար գրուած են եղեր» ըսող պա-
րոնն է ահա նոյն գրութեան հեղինակն ու նամա-
կաբերը:

ՏԵՄԵՐԻՔ

Աժանս Բոժոժիկ եւ Ընկ.

Մարիճա գետ

Վարժարանիս բէհիւման տնօրէնը Ամերիկա
կծկեց:

Պ. Ուղիղ-գատենք Շրջահայեցութիւնեանին միշ-
նորդութեամբը հոս կանչուեցաւ տխրահռչակ ա-
ռաւ փախաւ, բէհիւման տնօրէնին յաշորդելու
համար: Իրագէկ ակմբոց մէջ հաստատապէս կը
խօսուի թէ այս տարի ալ տեղւոյս վարժարանը ա-
մու շրջան մը պիտի բոլորէ:

(Մեզք ազգին գրամնեբուն)

Ա. Ստասիոն

Առաւ-փախաւը վակօնին մէջէն սկսաւ իր
գործունէութեան յատակագիծը պատրաստել:
Ա. կայարանի պախալէն տասնոց մատիտ մը և
թերթ մը թուղթ առաւ:

Մեծ կայարան

Տխրահռչակը հոս հասաւ ու զինքը գիմաւո-
րոյ . . . անտեսին ու ժամկոչին հետեւեալ յայ-
տարարութիւնն ըրաւ:

«Տեա՛րք,

Ես հոս չպիտի գայի, որովհետեւ Պուլկարիա
գաղթելէս ի վեր բանակցութեան մէջ էի Շիշ-
թօֆի, Բիշթօֆի, Գալաթի, Բէրէստէի և այլ բար-
ձրագոյն վարժարաններու տեսչութեանց հետ ու-
րոնք իրարու ձեռքէ զիս կը քաշէին, բայց մեր
ազնիւ բարեկամ Տիար Ուղիղ-գատենքեանին ա-
ռաջարկը անմիջապէս ընդունելով, շիշթօֆի ու
բիշթօֆը մէկգիւնեալ, վազեցի եկայ:

«Աղնիւ Տեա՛րք

Այժմէն կը յայտարարեմ ձեզ թէ ամբողջ
տարի մը ձեր վարժարանին մէջ պաշտօնավա-
րելով պիտի ջանամ հարուստի զաւակները հա-
մուշտու, որսալու, որպէս զի տարեգլխուն հոգա-
բարձութեան հասցէին «թ.քեր եմ» ուղղելէ ետ-

քը այն տշաբներով հոս վերահաստատեմ իմ մէ-
շիգօֆեան գրութեամբ «կթարանս», որուն նմու-
շը արդէն տեսաւ Պուլկարահայը:

Մուսալա

Անցեալ շաբթու Պալլադէն Զարպհանէլեան
գրատունը զրկուած ծախող քողիին պալեան՝ չո-
րեքշաբթի օրը Օնիկի բէյիին նաւովը Գալաթի
փախադրուեցաւ:

Մարիճա գետ

(Թէլէֆօնով)

Մէշիգօֆեան պատուելին՝ Բամշաթքայի ա-
ռետրական հրապարակէն առած յանձնարարա-
կանները վաղը պիտի ներկայացնէ տեղւոյս . . .
խանութպաններուն:

ԳՐԶԻ ԶԲՕՍԱՆՔ



«Տիեզերասաստն եմ,
Ինձի գիմեցէ՛ք . . .»



Դողացէ՛ք . . . կօշիկներ, ոտքերուս տակ:

Բոժոժիկ



«Լէ՛ւ էլէ խըրբանի,

Հովկուլեանը կու բանի.

Մուսալանըն մէյտանի՝

Մարդը փրկի՛ջ կու տանի»

ԵՐԶԱՆԿՈՒԹԻՒՆԸ

— 0 —

Մէկ երջանկութիւն միայն կայ
— Պարտականութիւնը :
Մէկ միութարութիւն միայն կայ
— Աշխատանքը :
Մէկ վայելք միայն կայ
— Գեղեցիկը :

Երջանկութիւնը երբ աչքերնուս առջևն է մեզի այնչափ մեծ կ'երևայ որ մինչև երկինք կը բարձրանայ, բայց մեր գունէն անցնելու համար այնչափ կը ծռի որ յաճախ չենք տեսներ զայն : Յոյսը յաճախ պատրանքի յանգող խոնջէնք մըն է :

Երջանկութիւնը արձագանգի մը կը նմանի, ձեզ կը պատասխանէ, բայց չի գար :

Մեր երջանկութիւնը պատրալի երևնալուն պէս կ'ուզենք վայրագօրէն կործանել զայն :

Հարկը տերեւ պէտք է գունաւոր և բուրմէնաւետ վարդ մը յօրինելու համար, նոյնպէս ուրախութեանց ժողովածոյ մը պէտք է երջանկութիւնը կազմելու համար :

Միութարանքը միայն անմահ բաներու մէջ փնտռեցէք, բնութիւն ու խելամուռք :

Բարի գործ մը կարենալընելը բաւական երջանկութիւն մըն է :

ՔԱՐՄԷՆ ՍԻԼՎԱ

ԾԵՐՈՒՆԻՆԵՐԸ

— 0 —

Ծերունիները մեկնող բարեկամներ են զոր պէտք է գէթ քաղաքավարութեամբ ճամբել :

Ունեց հետ ձեր ունենալիք յարաբերութիւններուն մէջ ուշադիր եղէք բոլոր այն նկատմաններուն որոնց կ'ուզէք հանդիպիլ ձեր ծերութեան միջոցին, որպէս զի դուք ալ ձեր կարգին իրաւունք ունենաք :

Ծերութիւնը չի յարգելը փլցնել ըսել է առաւօտուն այն տունը ուր գիշերը պիտի պառկէինք :

Եթէ երիտասարդները պէտք է խորհին որ օր մը պիտի ծերանան, նոյնպէս պէտք է ծերերն ալ չի մոռնան թէ իրենք ալ երիտասարդ եղած են, և այն ատեն իրենց ալ դժուար եկած էր խորշիլ այն բաներէն զոր իրենք այսօր տրկարութիւն և մոլութիւն կը կոչեն :

Ծերերը պէտք է որ պարսաւեն ու քամահարեն երիտասարդութեան բոլոր հաճոյքները, ար-

բեցողի մը նման որ խմելէն ետքը կը կոտրէ գաւաթը և կամ այն ճամբորդին պէս որ կը պղտորէ ակին ջուրը իր ծարաւին յապուրդ տալէ ետքը :

Նոյնպէս ծերունիները պէտք է մոռնան թէ ծերութիւնն անհրաժեշտ իմաստութիւնը սեղ է :


Սորվեցէք ծեր ըլլալ և զգալ չացէք նմանելու այն պոռուղներուն որ ժամանակը կը փտեցնէ հասունեակէ առաջ :

Թարգմ.

Մ. Ա.

Սասանան . . . ծնած :

Իտալական թերթերը կը պատմեն գեղացի կնոջ մը դիտուն ելած արկածը, Այս գեռատի կինը ծնաւ տարօրինակ երեւոյթ մը, եօթն մասունն շրջանէ մը վերջ : Տղան փոքր էր, բայց գլուխը տարօրինակ կերպով խոշոր : Ճակտին վերայ կը կրէր երկու եղջիւր ուղղաբերձ, աչքերուն վերք : Աչքերն ալ բերնին պէս շատ խոշոր էին, Ականջներուն ետեւը, նոյնպէս շատ խոշոր կը կորանային երկու ուրիշ եղջիւրներ : Մարմնոյն մնացեալ մասը շատ բարակ էր և երթալով կը բարակնար, կը կծկուէր խեցեմորթներուն մարմնոյն պէս : Ձեռքերը սաղմնային վիճակի մէջ : Ողնայարը կ'երկարէր երկար պոչի մը պէս, կատաւի պոչի մը նման : Եղջիւրներն առաձգական նիւթէ էին, և վերջին աստիճան գլուրաւոր էին : Այս հրէշաբանական արարարը ծնելէն քանի մը վայրկեան վերջը մեռաւ : Մայրը կը պատմէ թէ իր յղութեան միջոցին ամեն օր կերթար Բաբուլոնեանց եկեղեցին, ուր մասնաւորապէս կը դիտէր դժոխքի պատկեր մը որուն վրայ կ'երևի սատանայ մը՝ ճիշդ իր ծնածին նման :



ԳՆԳԱՍԵՂԸ

— 0 —

ԱՌ. ՆԻՆԻ

Գնդաւեղի վրայ ալ բան մը կրնան գրել ինծի, հարցուցիր տարակոյսի չեշտ մը գնելով հարցումիդ մէջ :

Խնչո՞ւ չէ, Ըողիս, ինչո՞ւ չէ :

Միթէ այդ նրբամարմին թելի կտորները՝
այդ չարածէի գործինները պզտիկ դեր կը կատա-
րեն մեր կեանքին մէջ։ Մինակ ձեռքիս վրայի
ճանկառու քնձը (արդիւնք քու գնդասեղներուդ)
բաւական էին չորս հատոր առնալի մը նիւթ մա-
տակարարելու։ Ատոնցմէ շատ աւելի աննշան բա-
ներու վրայ հաղարար տողեր պրուած են, նի-
նի, կրնաս վտահ ըլլալ ասոր։ Բազմապիւններու
վրայ բան չեն կարգացած, լաւ ուրեմն, ես քեզ
կապահովցնեմ թէ թաղականներ կան որ գըն-
դասեղ մը չեն արժեր, գիտե՞՞ ինչու, մի խըն-
դար, նինի, անոր համար որ գնդասեղ մը ան-
պատճառ գլուխ մը ունի, բայց ամեն թաղակա-
նի համար միւսնոյն բանը չենք կրնար ըսել գըծ-
բազդարար։

Մարգիային ճարտարագործութեան ամենէն
գիտասկար, ամենէն վտանգաւոր, մեր բարքերը
ամենէն շատ ազդեցող մէկ գիւտն է, գնդա-
սեղը։

Ձեռն հտւատար ասոր, և կը ծիծաղիս, աղւոր
նինի։

Ուզածիդ չափ վրաս խնդա, — եւ կ'ուզեմ որ
խնդաս, որովհետեւ ատիկա առիթ մըն է քու ակ-
ռանքներդ փոփոխելու շարքը անգամ մը ևս տես-
նելու, — բայց տրամադրութիւնս վայրկեան մը
չի դադարիր ողջամիտ, ուզիդ և օրինաւոր տրա-
մաբանութիւն մը ըլլալէ։

Գնդասեղը՝ ծուլութիւնը խրախուսող, դան-
դալութիւնը քաջալերող գործի մըն է։

Ձէ՛ պատահած քեզի որ դուրս ելլելու վայր-
կեանիդ շրջապատիդ քղանցքը քակուի և կամ
գոտիին կոծակը փրթի, ի՞նչ կ'ընես։

— Կը կարեմ, կը պատասխանես չուտով։

Ձէ՛ կը ստես նինի, ես մէկի դէմ հաղար
գրաւ կը դնեմ որ գնդասեղով մը այդ գծադ-
րութիւնը կը դարձանես և ուրախ զուարթ կի-
նաս դուրս։

Ծուլութեան նշանն է ատիկա և մի՛ մոռնար
որ ծուլութիւնը մայրն է ամեն չարեաց։

Ահա գնդասեղին, այդ բարակ, գաճաճ գոր-
ծիքին դերը։

Կինները այսօր նրբանէն սկսեալ մինչև մա-
ղբոր գնդասեղով զինուած են։

Կանացի կուրծք մը այսօր պատերազմի
գաշտ մըն է, որուն վրայ զինուորական կարգա-
պահութեամբ շարուած գնդասեղները կ'արգիլեն
օտար ոտնձգութիւնները։ Բառաօն, ձեռնձգու-
թիւնները ըսել ուղեցի։

Այս ըսածիս իբրև ապացոյց, ձեռքիս վրայի
ճանկառուքները, նինի։

Ա.

Նոր Բերականութիւն։

Հանրային ածականը երբէրիկ մարդու հա-
մար կը գործածուի պատուաբեր է, իսկ երբ կըն-
կան մը համար կը գործածուի, — ճիշդ հակա-
ռակը։ Ու յանցանքը Սահակ-Մեսրոպինը չէ՛։ Ա.

ԿԸ ՓԱՅԼԻՆ

Ազնիւ մարդիկ ամեն ուրեք՝
Իրենց գործով կը փայլին,
Մաքուր գործեր՝ անմեղ կուսին
Այտերուն պէս կը փայլին,
Մութ կերպարի վրայ աղամանք՝
Ամենէն լաւ կը փայլին,
Պարկեշտ մարդոց խոհուն դէմքեր՝
Ազնուութեամբ կը փայլին։

Բարկացողին աչքերը միշտ՝
Կատալութեամբ կը փայլին,
Գինեմուլին աչքն ու քիթը՝
Բիւրեղի պէս կը փայլին,
Որսորդ կատարին սուր աչքերը՝
Մութի մէջ իսկ կը փայլին,
Վաշխառուն ժանտ աչքերն ալ՝
Ծիւաղութեամբ կը փայլին։

Թաղականաց սնուկները՝
Պարապութեամբ կը փայլին,
Տէրտէրներուն փակեղները՝
Իւզոտելէ կը փայլին,
Տղեղունիք իրենց կոճով՝
Գոհարի պէս կը փայլին,
Ներկով ծեփուած ունիները՝
Խաղաղի պէս կը փայլին։

Մեր ազգային վարժարաններ՝
... ութիւններով կը փայլին,
Դրամն առնող ուսուցիչներ՝
Ուրախութեամբ կը փայլին,
Նոր ներկուած կոշիկները՝
Արծաթի պէս կը փայլին,
Մեր նորեկու գրագէտներ՝
Ձէվզէկութեամբ կը փայլին։

ԶԱՐԵԶ

Վեղարաւոր կարգ մը հայրեր՝
Հրպարտութեամբ կը փայլին,
Սիրիւներով տէրպապաներ՝
Տգիտութեամբ կը փայլին,
Հայ խմբագիրք և գրաշարք՝
Կուտուցութեամբ կը փայլին,
Ձրիակեր բաժանորդք ալ՝
Սրբորիութեամբ կը փայլին։

ԲՈԺՈԺԻԿ

ՈՒՅՏՈՒՐՄԱՍԻՕՆ

ՀԱՃԻ ԲԱՆԱԳՕ

Տէնիզ պաղչէսինն աղածը եօլլարընն ա-
րասընտա, յուրիս ալընըն պիր կէճէսինտէ՝ պիր
չօգ ինտան գալապալըղը կէօրիւնմէքտէ իտի .
չէօյլէ քի, ուղադտան պաղան՝ առէթա տէնիզ
տալկալարը կիպի կէօրմէքտէ իտի էհալինին կէ-
զինմէսինի:

Պէօյլէ պիր կիճէյի պօշ կէչիւրմէք իչիւն
պիզիմ Մայնօս՝ Արթինինի կիւնտիւզտէն էվէ չա-
լըրըպ, չէօյլէ տէտի:

—Պիրէ Արթին, աֆէրիմ, պիզի հիշ պիր ագ-
չամ կէզտիրմէք ֆիքրինտէն պիլէ կէչմէտի,
տէյիլմի:

—Աման, աման Մայնօս սէնտէ, բէք չօգ
թագալա իթմէք պիլիւսին:

—Հատի, հատի, ուղաթմա, պէն պիլիւրիմ,
սէնին պուրնուն չիմտի եիւքսէքլէրտէ, կէչէն ագ-
չամ սանքի պէն սէնի կէօրմէտիմ մի:

Արթին պուրնու իչիթինճէ, եիւզիւնիւն բէն-
կի աթտը:

Մայնօս. —Կէօրտիւն մի, ճէվապ պիլէ վէ-
րէմէյօրսուն, սէնի կիտի սէնի, զաթը տէրլէր
եա, էրքէյէ ինամ օլմալ:

—Մայնօս, ալլահընը սէվէրսէն պէօյլէ չէյ-
լէր սէօյլէմէ, սէնին հէր պիր սէօզիւն եիւրէյիմէ
օգ կիպի սալլանըյօր:

—Հատի, հատի, էօյլէ կեզգաւորլուդլտր
եալմա, սիզին եիւրէյինիլ թաշտան տըր, սի-
զին ինսաֆընըղ օլմալ, եազըգ օնլարա քի սի-
զին կիպիլէրին սէօզլէրինէ ինանըրլար տա՝ քէն-
տիլէրինի ուղուրունուզա թէլէֆ իթմէյէ հալըր
պուրնունըլար, պէն զաթը չիւպհէլէնիյօրտում,
եազըգ, եազըգ:

Մայնօս պու սէօզլէրինտէն սօնրա՝ պաշընը
աուրպ կէօզ եաշլարընը սիլտի: Պունու Արթին
կէօրիւնճէ՝ եիւրէյի տաեանամալըպ:

—Չօգ պօշ չէյլէր եաբընօրսըն Մայնօսնու-
ում, պէնի քիմտէն գըսղանընօրսուն պէ սէվ-
կիւլիւմ, սօնունա գատար սէնի սէվլճէյիմի վառ
թմէտիմ մի, ահ, Մայնօսնունում: Ալլահ աշգը-
նա օլսուն, սիլ չու կէօզ եաշլարընը, հատի, հա-
տի ուղաթմա, կէլ պարըչալըմ, ագչամա հաճի
Բանագօյա կիտէրիլ տէ պէն սանա օնլարըն
հէքիսինի տէ ունութտուրըրմ, հէմաէ թէաթ-
րօլարա տա կէօթիւրիւրիւրիմ սէնի:

—Է հատի պագալըմ, ագչամա կիտէլիմ տէ
պարի թէաթրօլարըտա կէօրէլիմ, Հըը, սանա
պիր չէյ սօրաճալմ պիրէ Արթին, կէչէն կիւն

հանի սիլ օթուրուեօրտունուզտա պիրիսի տէ կու-
կունկ, իպիք տէյէ պաղըրընօրտու, նէ՞ իտի եա-
—Հա, հա, հա, պիլմէյօրսունըն գըլ, թէ օ
կազկըլտաւն արգասընտան պաղըրմըչլար տէտի
լէր:

—Կազկըլտաք տէտիյին չու տէվէ կիպի ու-
ղուն պօյլու պիր չէյ վարսա օնուն իչիւն մի տէ-
յօրլար:

—Էօյլէ օլմալը:

—Ամա պիրէ Արթին, ինչին էօյլէ եիւրիւր-
քէն սալլանընօր, տօղրուսաւեա, եանընտան կէ-
չէրքէն աաամ չիւպհէյէ վարընօր քի տաապա իւ-
զէրիմէ մի տէլէճէք տէյիլ:

—Հաա, սէն օնու պիլմէյօրսուն, օ թէնհա
սօղաղլարտա պիր աղ տօղրու եիւրիւր: ամա
բիացալա չըգընճա, իլլէ պիր գաշ գըլ արասըն-
տա պուրնունըսա՝ սալլանըր տուրուր, սալլան
պապամ սալլան:

—Ամա Արթին բէք կիւլէճէք չէյ, թագուշ
քէրէկինին ահպարըսը տէտի քի, կաղէթալարա
հօթվազ եազարըմը:

—Սահիհ գըլ, օ չօգ օգումուշ, գըեադ ֆը-
րանսըղճա պիլիւր իմիշ ամա, տէրլէր եա, պիր
թագըմ օգումուշլարըն հէր վաղըթ պիր թալս-
թալարը նօգսան օլուր:

—Նէ հալ իտէ, չիմտիլիք պու սէօզլէրի պը-
րադ տա՝ ագչամա կէլ տէ կէլմէյէ կիտէլիմ:

Արթին՝ ագչամա էրքէն կէլմէյէ սէօզ վէք-
տիքտէն սօնրա՝ չըգըպ կիլմտի:

(Տէվալմի)

ԲԷՏԻ ԿԷՕԶԻԻ

“ԱԶԱՏ ԽՕՍԷ”

Փոքր գիրքով և 16 երեսներէ բաղկացեալ
այս անունով հոնգէս մը սկսած է հրատարակ-
ուիլ Բաիլիլմէլ, խմբագրութեամբ ծանօթ գը-
րագէտ Տ. Ե. Օտեանի: Սոյն հանդէսը տարեկան
առնուազն 12 թիւերէ պիտի բաղկանայ, որուն
բաժնեգինն է 5 ֆրանք, կանխիկ

Հասցէ

M. Perrier Pour Azad Khosk
Rue des Guillemites Paris (IVme)

Հետեւեալ գրքերը կը ծախուին Ա. Զարպ-
հանէլեան գրատունը

Թուարանութիւն Գաֆաֆեան	Ա.	Տարի 1 ֆ.
”	Բ.	1 ֆ. 50
”	Գ.	3 ֆ.
” Պօղաճեան ընդարձակ		3 ֆ. 50
” Բանալի Պօղաճեանի		2 ֆ. 50

—o—

ԹԵՐԹՈՆ «ՀԱՅԵԼԻ» (29)

ՌԵՆԷ ՏՐ ԲՕՆ ՍԷ

ՄԱՐԳԱՐԻՏՆԵՐՈՒ ԳԵՏԸ

(ՊԱՐԾԻՐ-ՄԱՄԱԿԱՆԸ)



—Բայց պարզապէս երկու պատճառներով. նախ փասն զի դուք համոզուած էիք թէ միայն ճշմարիտ յանցաւորները դատապարտած էք. յետոյ որովհետեւ ոճիրը զործուեցաւ Քանդոնէն ու արուարձաններէն զուրս անանկ տեղ մը ուր Սանկի հպատակները շատ բիշ անգամ կերթան:

Մէնկ անշուշտ պիտի ցանար ապացուցանել իր պաշտօնակցին թէ այդ երկու պատճառները հաւասարապէս անբաւական կ'երևային, երբ Սուն—Բօ իմացուց թէ պատուիրակ զրկուած մուրացկանը ետ կը դառնար:

Այս մարդ վազելով կուգար, ինչ որ բարեգուշակ էր: Արդարեւ մեր բարեկամներուն բով գալուն պէս, բաղաբաժնուած խոնարհեցաւ անոնց առջև և խընդրեց որ իրեն հետեին:

Հինգ վայրկեան ետքը երկու մանտարէնները փողոցին ծայրն հասան և մտան այն տարօրինակ տեղն ուր մուրացկաններու իշխանը հաստատած էր իր կեդրոնատեղին: Քառակուսի վայր մըն էր որուն չորս անկիւնները կը գտնուէին յոյժ ողորմելի խրճիթներ: Ընդարձակ սալատուն մը, գիւղական շուկայի մը հանգոյն, կեդրոնը կը գրաւէր:

Առ նուազն երկու երեք հարիւր մուրացիկներ կը գտնուէին հոն, խմբակներու բաժնուած: Ոմանք անմըռուկ կը ծխէին, ուրիշներ կ'ուտէին, կը խմէին կամ կը կապէին այն վերքերը զորս ապրուստի միջոց ըրած էին: Սալատան տանիքին գերաններէն կախուած բանի մը լապտերներ և պարզապէս գետինը միտում մէկ բանի ջահեր կը լուսաւորէին այդ այլանգակ պատկերը:

Մինակ, անցնելով այն անհեթեթ ամբոխին մէջէն որ կը բաղկանար բնութեան և հիւանդութեան ստեղծած ամեն հրէշիքէն՝ հսկայ, գաճաճ, կաղ: ձախիկ կուզ, միակաշի, կոյր, գօտոտ և անդամալոյծ: Մէնկ, որ ուշադրութեամբ կը բնէր այդ մարդիկը: յուսալով որ այդ ամեն ագեղութիւններուն մէջ կը գտնէ շուստ վաճառը: Մէնկ կարծեց նշմարել թէ այդ վերքերուն մեծագոյն մասը կեղծ էին, թէ մեծագոյն մասն այդ խեղութեանց՝ սուտ էր:

Ճշմարտութիւնը սա է որ բոլոր այդ մարդիկ ուրախ էին և շատ չարչարուելու երևոյթ չունէին:

Արժանաւոր նախագահը շուտով համոզուած գոյացուց երբ տեսաւ իր ոտքերուն տակ քաշկոտուող ցօսացեալ մը որ յանկարծ նետեց իր աթոռակը: Զայն իր թնին տակ առնելէ յետոյ, սկսած էր պարել՝ սըրունդներուն թմրութիւնը անցնելու համար:

Սակայն այս անակնկալ կերպարանափոխութեան պատճառով զարմանքը՝ մեծարոյ նախագահին արգելք չեղաւ որ ընկերոջը չհետևի: Քանի մը վայրկեան ետքը իր փնտառը բնաւ չգտնելով, սալատան ծայրն հասաւ, այսինքն Սանկին դիմացը, որ հագիւ ոտք ելած էր իր այցելուները ողջունելու համար:

Մուրացիկներուն իշխանը վաթսուն տարու մարդ մըն էր, հսկահասակ և բաւական բալցր դէմքով, թէև թաթարական դէմք ունենար: Հագած էր կապոյտ մետաքսէ պատառուն պարեգօտ մը և գլուխը զրած էր եղեգով հիւսուած և ժժմակներով զարդարուն լայն գըլխարկ մը: Վիշն անցած յասմկաբարէ ծանր մանեակ մը մինչեւ կուրծքին վրայ կ'իյնար և աջ ձեռքին ցուցնումառը կը կրէր աշծաթէ լայն մատնի մը որուն վրայ եղընքը նաքարէ մարդ մը կար ծնրաքիր:

Այս երկու գոհարներ նշաններն էին իր իշխանութեանը և իր արժանաւորութեանը:

Ար բաւէր որ անցագիր մը կրէ Սանկին կնիքը որպէս զի զայն ձեռքն ունեցողը կարենայ աներկիւղ շըրջադայիլ շինաստանի հիւսիսէն հարաւ: Նոյն իսկ կ'ըսուէր թէ անկիւ գերագանց յուսուածք մըն էր թայթիկներուն և ճերմակ-նունուֆարին, սոսկալի և հզօր ընկերակցութեան բոլոր աղանդներուն բով:

Այս եղական իշխող շրջապատուած էր տասերկսբի չափ մարդերէ որոց հետ կարելոր վիճաբանութեան բռնուած ըլլալ կերեւէր:

—Առանձին խոսիլ կուզէի հետերնիդ, ըսաւ սակայն Ֆօ—Հօբ:

—Մէկ վայրկեանէն, տէր, ձերն եմ, պտասխանեց ցնցոտաւոր իշխանը: Հինգ վայրկեան միայն կը խնդրեմ գործս վերջացնելու համար գանձապահիս հետ: Այսօր կը կարգադրեմ հաշիւներս: հպատակներս սպասցնելու չեմ:

Այն ատեն վերատեսուէն և Մէնկ մարդ մը տեսան, այն զոր Սանկ իր գանձապահը կ'անուանէր յոխորտանքով, որ թերթ մը մեծ թուղթի վրայ կը շարէր անվերջանալի թուանշաններ, մինչ իր տէրը, առանց հոգ ընելու իր աստիճանը, ինք անձամբ կը համրէր և իրարմէ կը բաժնէր մեծ ճարտարութեամբ ամեն տեսակէ

դրամները զոր կը պարունակէր իր ծունգերուն վրայ դրուած պղինձէ թաս մը .

Հարաթուան դրամական հասոյթն էր որ կը գանձուէր .

Գալով պարէններու հասոյթներուն , անոր բաժանումն առորեայ էր , իրիկունը , մուրացկաններու դարձէն անմիջապէս ետքը , իրենց իշխանին վստահութեամբը պատուաւ բաշխողներու կողմէ .

Իբրեւ ողորմութիւն իրենց ընդունած հաջուտներն ու բրինձը հաւատարմապէս կը բաժնէր խումբին . Առաջինները կը մաքրուէին ծախուելու համար , վասն զի ընկերութեան կանոններէն մէկն էր ցնցոտիներ հագնիլ , միայն ցորենը թնամով կը համարուէր սովի օրերուն համար .

Ար տեսնուի թէ այս Սանկը նախատեսութեամբ իր իշխան մըն էր , և թէ համբաւաւոր եղբայրակցութիւնը կը յանձնաձուէր անտեսական յոյժ իմաստուն օրէնքներուն համեմատ .

Մէնկ հաւանօրէն այս խորհրդածութիւններն ընկու վրջէն էր , ուշադրութեամբ ընկնելով հանդերձ իր առջեւէն անցնողները որք կերթալին բաժինը ընդունիլ գանձապահին ձեռքէն , և կը դիտէր թէ անոնց մէջէն ոչ ոք խեղանդամ , ցաւագար , անդամալոյժ էր , թէ կուզէր հասակնին ցցած էին , թէ կոյրերը կը տեսնային և թէ հազիրը թեւեւուն տակ կը կրէին իրենց անթացուպիրը , երբ քօ—չոր սթափեցուց զայն իր յարածուն ապշութենէն .

Սանկ վերջապէս ելած էր այն աթոռակէն որ իբրեւ դահ կը ծառայէր իրեն , բաւ ոստիկանութեան պետին .

— Տէր , պատրաստ եմ ձեր հրամանին .

— Մինակ ձեզի հետ խօսիլ կուզեմ , դիտել տուաւ պաշտօնատարը .

Չինական այդ աղբատանոցին պետը հրաման տուաւ , և շուրջ անմիջապէս պարպուեցաւ . Հպատակներն ի բլթիկէն ահա անհետացած էին .

— Հիմակ կրնանք խօսիլ , յարեց խրոխտ ժպտով մը . մինակ ենք .

— Գիտե՞ս ինչու կ'ուզեմ հետդ տեսնուիլ .

— Այ , տէր .

— Գիտես սակայն երիտասարդ լէնկ— Թա— Լանկին սպանութիւնը . և որովհետեւ յանցաւորն երեւան չէ հանուած , միտքէդ անցընելու էիր որ քեզի պիտի դիմէի տեղեկութիւններ ստանալու համար զորս չէիր կրնար մերժել .

— Ընդհակառակը կը կարծէի թէ լէնկի սպանիւնները ձերբակալուած ու դատապարտուած էին .

(Շարունակելի)

ԱԶԴ

Թաղական խորհուրդս Վր փութայ ծանուցանել թէ Ազգ. վարժարանաց և մանկապարտեզի վերաբարձու տեղի պիտի ունենայ յառաջիկայ սեպտ. 3 երկուշաբթի օրը .

Ուստի կը հրաւիրուին ծնողք և պաշտպանք ներկայանալ ամեն օր առաւօտները ժամը 8—12 , իսկ կէս օրէն յետոյ ժամը 2—5 ի Թաղ. խորհրդարան , իրենց դաւակաց մտից արտօնագիրը ստանալու համար .

Ի դիմաց Թաղ. խորհրդոյ

Լ. Կանաչապ.

Լ. Կանաչապ.

Ս. Գաբրիէլեան

Յ. Թոյմասեան

—>>><<<—

ԱԶԳԱՆՑ ԿՐԹԱՐԱՆ

Վարժարանիս Զրգ տարեշրջանը կը սկսի յառաջիկայ սեպտ. 1/14ին .

Կ'աւանդուին Հայ ֆրանս. և Պոլի. լեզուներէն զատ կրօնք. բարոյագիտութիւն . թուաբ. աշխարհագր. պատմութիւնք. բնագիտ. առ անին տնտեսագիտ. և այլնք .

Այս տարի անցեալ տարիներէն աւելի մասնաւոր խնամք պիտի տարուի մանկապարտեզի մասին .

Ընդունելութիւնք և մասնաւոր տեսակցութիւնք կը կատարուին ամէն օր ժամը 9—12 .

Վառնա

Տնօրէնութիւն

Սագալը չէլձէ թ 1115

Պ. Ճիւրճեան

Հետեւեալ գիրքերը մեր խմբագրատան մէջ կը ծախուին .

Լուսինեան Իշխան — Ֆրանսահայ Բառարան , դին 25 ֆր. ոսկեղ ըամ . Պուլկարահայ վարժարանաց համար 20 ֆրանք .

Թ. Գ. Հինտլեան — Տեոական և դորմնական Բերականութիւն Պուլկարներէն լեզուի 1 ֆր .

Ե. Մուրատեան — Քննական պատմութիւն Արշակ Բ. ի և անոր Պապ որդւոյն . 2 ոսկէ ֆր .

Թապալաքեար Փիլիկ տղար հարսնիքը 60 սեպ .

Բարեկենդանի անկուտիները , կտտակախաղ 1 արար 50 սեպ .

Մահճուպիյէթին միւլքեաֆաթը , քօհէտի պիլքէրտէ , 50 սեպ .

Գալանճ . դօճա եախօտ Էնֆիլէճի , քօհէտի պիլքէրտէ , 50 սեպ .

Печатница „Взаимность“ — Варна .